ԹԵՄԱ 3 ԱՄԵՐԻԿԱ

ԴԱՍ 3.5. Լատինական Ամերիկա: Աշխարհագրական դիրքը և սահմանները, կազմը: Բնական պայմաններ և ռեսուրսներ

• • •

ԱՄՆ-ն ունի բարենպաստ ագրոկլիմայական ռեսուրսներ, հումուսով հարուստ ընդարձակ հողատարածություններ (օրինակ՝ պրերիաները, անտառատափաստանները) բազմաճյուղ և ինտենսիվ գյուղատնտեսության զարգացման համար: Գյուղատնտեսության ինտենսիվությունը պայմանավորված է նաև մեքենայացման, քիմիական, ոռոգման բարձր արդյունավետ համակարգերի, գյուղատնտեսական գիտության նվաճումների (սելեկցիայի, գենետիկայի) ներդրման բարձր մակարդակով: Կարևոր գործոն է նաև գյուղատնտեսական արտադրության ճիշտ կազմակերպումը: Տիրապետողը միջին չափերի (մինչև 200 հա) ագարակային, ֆերմերային տնտեսություններն են, որոնց բնորոշ է մասնագիտացման բարձր աստիճանը, արտադրանքի մեծ ծավալը, ցածր ինքնարժեքը և ապրանքայնության բարձր մակարդակը:

• • •

Տավարաբուծությունը զարգանում է **կաթնատու** (բնակչության մեծ կենտրոնացման շրջաններ՝ Կալիֆոռնիա, Հյուսիս-Արևելք) և **մսատու** (ցորենի, եգիպտացորենի գոտիներ) ուղղություններով: Եգիպտացորենի գոտուն է հարմարեցված նաև **բեկոնային խոզաբուծությունը**, ցորենի և եգիպտացորենի գոտուն՝ **բրոյլերային** թռչնաբուծությունը, որը համարվում է ԱՄՆ-ի անասնապահության ամենաինդուստրացված ճյուղը: **Ոչխարաբուծությունը** զարգացած է Արևմուտքի լեռնային և չորային կլիմա ունեցող շրջաններում: Ճյուղի եկամտաբերությունը բարձր չէ, որի պատճառով ոչխարների գլխաքանակը վերջին տարիներին նվազել է:

• • •

ԱՄՆ-ն ունի նորագույն տեխնիկայով հագեցած, զարգացած տրանսպորտային ցանց, որի խտությունը ավելի մեծ է երկրի հյուսիսային և արևելյան շրջաններում: Տրանսպորտի առաջատար տեսակը **երկաթուղայինն** է, որն աչքի է ընկնում ցանցի խտությամբ և փոխադրումների մեծ ծավալով: Չնայած ԱՄՆ-ն երկաթուղիների երկարությամբ աշխարհում առաջինն է (293 հազ. կմ) , բայց դրանց երկարությունը գնալով նվազում է: Կարճ և միջին տարածություններում բեռնա և ուղևորափոխադրումներում մեծ է ավտոմոբիլային տրանսպորտի դերը: Այս տեսակով փոխադրումները կատարվում են «**դռնից՝ դուռ**» (բացատրեք երևույթը): ԱՄՆ-ն աշխարհում առաջինն է նաև ավտոմեքենաների քանակով՝ **ավտոպարկ** (300 մլն.) ավտոմայրուղիների երկարությամբ (6,6 մլն. կմ):

• • •

Միջազգային զբոսաշրջությունը գիջում է Եվրոպային: Համեմատության համար նշենք, որ եթե Իսպանիա այցելում են բնակչության թվաքանակը 1,6 անգամ գերազանցող զբոսաշրջիկ (65 մլն), ապա ԱՄՆ այցելող զբոսաշրջիկների բաժինը կազմում է երկրի բնակչության 1/6-ը(կարող եք հաշվել զբոսաշրջիկների տարեկան թվաքանակը): Բարձր զարգացման է հասել ներքին զբոսաշրջությունը:

Արտաքին առևտրական գլխավոր գործընկեր երկրներն են՝ Կանադան, Ճապոնիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Լատինական Ամերիկայի երկրները:

Ներքին տարածքային տարբերությունները: Քանի որ ԱՄՆ-ի տարբեր մասեր ունեն բնակեցման ու յուրացման տարբեր ժամանակահատվածներ, զարգացման բնական և պատմական տարբեր պայմաններ և դրդապատճառներ, ուստի աշխատանքի աշխարհագրական բաժանման արդյունքում առաջացել են արտադրական մասնագիտացման ներքին տարբերություններ: ԱՄՆ պաշտոնական վիճակագրությունը նահանգները խմբավորում է 9 տարածաշրջաններում, որոնք էլ մտնում են չորս տնտեսաաշխարհագրական **մակրոշրջանների** մեջ: Դրանք են՝ **Հյուսիս-արևելքը**, **Միջին արևմուտքը**, **Հարավը** և **Արևմուտքը**: Ներքին տնտեսաաշխարհագրական տարբերությունները կարող եք որոշել տեքստի բնութագրերով:

• • •

ԱՄՆ-ի գյուղատնտեսությունը բազմաճյուղ տնտեսության կարևոր օղակն

է, որը բնակչությանը ոչ միայն ապահովում է պարենամթերքի հիմնական (լայն սպառման) տեսակներով, թեթև և սննդի արդյունաբերությանը՝ հում-քով, այլև արտադրանքի մի մասը արտահանում է համաշխարհային շուկա:

• • •

Անասնապահությունն ունի հարուստ կերային բազա՝ բնական արոտ-ները, մշակվող կերաբույսերը և գյուղատնտեսական մի շարք մշակաբույ-սերի թափոնները (եգիպտացորենի, սոյայի, կարտոֆիլի): Բրազիլիայից և Հնդկաստանից հետո կովերի գլխաքանակով աշխարհում երրորդն է՝ մոտ 100մլն. : Անասնապահության առաջատար ճյուղը տավարաբուծությունն է:

• • •

Գլխավոր տեխնիկական մաշակաբույսերից են բամբակենին և սոյան: Աճեցնում են նաև ծխախոտ, շաքարի ճակնդեղ, եղեգնաշաքար: ԱՄՆ-ն ցորեն և սոյա արտահանող երկիր է:

• • •

ԱՄՆ-ի ծովային տարանսպորտի դերը գնալով նվազում է, չնայած այն բանին, որ առևտրական նավատորմի **տոննաժը** (առևտրական բոլոր նավերի՝ բեռները փոխադրելու տեխնիկական հնարավորությունների միագումարը) ավելի քան 20 մլն. տ. է:

ԱՄՆ-ի տրանսպորտային համակարգում մեծ դեր ունի նաև **ներքին ջրային** տարանսպորտը. Մեծ լճերը ջրանցքներով կապված են Միսիսիպի գետին (որը գետային գլխավոր ուղին է՝ Օհայո վտակով), ստորջրյա գե-տալճային համակարգով էլ՝ Սուրբ Լավրենտիոս գետին, որով էլ հասնում են Ատլանտյան օվկիանոս՝ Նյու Յորք նավահանգիստ: